ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» դեկտեմբերի 2015**թ.** **N---- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԱՐԱՏՅԱՆ
62/2 ՇԵՆՔԻ Հ.104/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 270-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Արարատյան փողոցի հ.62/2 շենքի հ.104/1՝23.95քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 31082015-01-0168 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ռիմա, Էդիտա, Գայանե Առաքելյաններին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂՈՑԻ 62/2 ՇԵՆՔԻ Հ.104/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Արարատյան փողոցի հ.62/2 շենքի հ.104/1՝ 23.95 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել Ռիմա, Էդիտա և Գայանե Առաքելյաններին:

Ներկայումս, նշված հասցեում գտնվող բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N31082015-01-0168 վկայականի՝ հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Համաձայն Շենգավիթ վարչական շրջանի «Արարատյան 62/2» համատիրության կողմից 16.11.2015թ. և բնակչության պետական ռեգիստրի հաշվառման մասին տրված 17.11.2015թ. տեղեկանքների՝ Ռիմա, Էդիտա, Գայանե Առաքելյանները հաշվառված և փաստացի բնակվում են Արարատյան փողոցի հ.62/2 շենքի հ.104 բնակարանում և կատարում բնակարանի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ վճարումները:

Քննարկվող բնակարանը հանդիսանում է սեփականության իրավունքով Ռիմա, Էդիտա և Գայանե Առաքելյաններին սեփականության իրավունքով պատկանող, Արարատյան փողոցի հ.62/2 շենքի հ.104 հասցեում գտնվող բնակարանի մի մասը, որը անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 22.09.1998թ. հ.023069 վկայականում նշվել է որպես ընդհանուր (ընդհանուր կոմունալ հարմարություններ):

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 15.10.2015թ. հ.39/02-26-388 տեղեկանքի՝ Արարատյան փողոցի հ.62/2 շենքի հ.104 սենյակը և սենյակին կից գտնվող 29.0 քմ մակերեսով կոմունալ և օժանդակ հարմարություններով տարածքը 29.02.1992թ. մետրոպոլիտենի և միացյալ արհկոմի համատեղ որոշմամբ հատկացվել է Ռիմա Առաքելյանին և այն օգտագործվում է միայն Ռիմա Առաքելյանի կողմից:

Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են երևան քաղաքի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ փաստական հանգամանքները, ուստի ք. Երևան, Արարատյան փողոցի հ.62/2 շենքի հ.104/1 հասցեում գտնվող գույքի անհատույց օտարման համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂՈՑԻ 62/2 ՇԵՆՔԻ Հ.104/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համյանքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂՈՑԻ 62/2 ՇԵՆՔԻ Հ.104/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ